

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՃՇԳՐՄԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐ
(ԷՐՁՐՈՒՄԻ ԵՎ ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

*Գեղամ Բաղայան
Հայաստան*

1.1. Հայկական հարցի կարևորագույն բաղկացուցիչն է արևմտահայության թվաքանակի ճշտումը: Սա այն խնդիրն է, որն առ այսօր չի կորցրել իր հրատապությունն ու արդիականությունը, եթե հաշվի առնենք, որ ներկայումս էլ թուրքական պատմագրությունն ու գաղափարախոսական մեքենան ճգնում են «ապացուցել» Օսմանյան պետության կողմից որդեգրված և մշակված այն կեղծ տեսակետը, թե իբր հայերն իրենց բնօրրանում երբեք էլ մեծամասնություն չեն կազմել, հետևաբար՝ ավելորդ է խոսել հայկական ինքնավարության մասին: Այս հարցում, ի դեպ, վերջին շրջանում, թուրքիայի խրախուսմամբ և, անշուշտ դրամական լուրջ օջակցությամբ, հրատարակվել են մի շարք քաղաքական հատուկ պատվեր կատարող աշխատություններ, որոնցից հարկ է առանձնացնել Քեմալ Քարիաթի «Օսմանյան բնակչությունը: 1830-1914թթ.»¹ և Ջեսթին Մըք-Քարթիի «Մահմեդականները և փոքրամասնությունները: Օսմանյան Անատոլիայի բնակչությունը և կայսրության վերջը»² գրքերը, որոնցում հեղինակները, հենվելով օսմանյան պաշտոնական վիճակագրության, մասնավորապես՝ 1911-1912 թթ. (Հիջրայի 1330) այսպես կոչված «համընդհանուր մարդահամարի» (ոսֆուս-ի սոսոմի) տվյալներին, յուրովի «ճշտել» են Օսմանյան կայսրության, ընդհանրապես, և Արևմտյան Հայաստանի, մասնավորապես, հայ բնակչության թվաքանակը՝ բնականաբար թուրքական շահերի տեսանկյունից:

1.2. Ինչպես հայտնի է, գրեթե միաժամանակ հանդես են գալիս նաև մեծաքանակ հայկական վիճակագրական տեղեկագրեր, որոնք վերաբերում են նույն խնդրին: Դրանց շարքում առանձնանում են ինչպես 1912-1914 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կարգադրությամբ առաջնորդական թեմերի կողմից կատարված վիճակագրությունները³, այնպես էլ 1914-1917 թթ. ընթացքում Արևելյան Հայաստանի, Պարսկաստանի և Այսրկովկասի տարբեր վայրերում պարբերաբար անցկացված արևմտահայ գաղթականների հաշվառումները: Վերջիններիս մեջ հատկապես կարևորվում են Կովկասի փոխարքայության կողմից 1915 թ. հունվարի 30-ին Երևանի նահանգի տարածքում և 1916 թ. հունվարի 14-ին Այսրկովկասում անցկացված միօրյա վիճակագրությունները⁴: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Շիրինի (Շիրին Եղիազարյան) կողմից 1916-ի օգոստոս-սեպտեմբերին Նոր Բայազետի գավառում կատարված նմանատիպ հաշվառումը⁵ և Ա.-Դոյի (Հովհ. Տեր-Սարտիրոսյան) գլխավորությամբ Սալմաստի գավառում (Պարսկաստան) 1917 թ. փետրվար-մարտ ամիսներին անցկացված վիճակագրությունը⁶: Մասամբ միայն հրատարակված այս տեղեկագրերի տվյալները, համեմատության մեջ դրվելով մեր կողմից վերն արդեն հիշատակված պաշտոնական և հայկական վիճակագրություն-

ների հետ, հնարավորություն են ընձեռում բավական մեծ ճշգրտությամբ պարզել Արևմտյան Հայաստանի մի ամբողջ շարք գավառների հայ բնակչության թվաքանակը Առաջին աշխարհամարտի նախօրյակին: Միաժամանակ, հնարավոր է դառնում որոշել թե՛ օսմանյան և թե՛ հայկական վիճակագրությունների հավաստիության աստիճանը:

2.1. Արևմտահայ գաղթականների մեզ հայտնի առաջին առավել ամբողջական վիճակագրական տեղեկագրերը վերաբերում են Երզրումի վիլայեթին: Սա պատահական չէ, քանի որ նշված վարչամիավորը 1914 թ. աշնանն անմիջապես ներառնվեց Կովկասյան ռազմաճակատում սկսված պատերազմական գործողությունների ոլորտը, իսկ վերջինիս սահմանամերձ կազաների զգալի մասը կարճ ժամանակամիջոցում ռազմակալվեց ռուսական բանակի կողմից: Ռուսների նույնմերյան նահանջի ժամանակ նշված տարածքի հայ բնակչությունը հնարավորություն ունեցավ իր մեծագույն մասով գաղթել Արևելյան Հայաստան: Երզրումի վիլայեթի Բասենի և Նարիմանի կազաներից (գավառակներից), ինչպես նաև Բայազետի սանջակից (գավառ, կազաները՝ Բայազետ, Ալաշկերտ, Անթաբ կամ Դուբաթ, Դիադին, Կարաքիլիսա) դուրս եկած գաղթականների 1914-1915 թթ. հաշվառումները պարզորոշ ցույց տվեցին, որ հայ բնակչությունը մինչև գաղթն անհամեմատ ավելին էր, քան ցույց է տրված օսմանյան 1911-1912 թթ. «մարդահամարում»: Մասնավորապես Բասենում *nufus-i umumi-i* տվյալներով հայերի թիվը կազմել է ընդամենը 10.050 (կլորացված) մարդ: Մինչդեռ 1915 թ. հունվարի 30-ի միօրյա վիճակագրությամբ նույն կազայի միայն 15 գյուղերից (Ալիճագրակ, Գոմաձոր, Դելիբաբա, Էգեպատ, Թողովերան, Իշխու, Խոլըր-Էլիաս, Խոսրովերան, Կոդաբազ, Հարսնեքար, ճռասոն, Յաղան, Յուզվերան, Տոտի, Քյուփրիքյոյ) երևանի նահանգի տարածքում գրանցվել էր ավելի քան 12,4 հզ. մարդ (1476 տուն): Ընդ որում, գաղթի ընթացքում նշված տները (ընտանիքները) կրել էին որոշակի կորուստներ՝ 640-ից ավելի զոհվածներ, անհետ կորածներ, տեղում մնացածներ ևն: Բացի այդ, ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 30.01.1915թ. միօրյան ամբողջությամբ չի արտացոլում բասենցի գաղթականների (և ընդհանրապես՝ մյուս արևմտահայերի) թիվը: Մասնավորապես 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարված հաշվառումներից պարզ է դառնում, որ զգալի թվով բնակիչներ դուրս են մնացել վերոհիշյալ վիճակագրությունից: Մեր հաշվարկներով նրանց թիվը կազմում էր շուրջ 1000 մարդ (շուրջ 110 տուն): Ըստ այդմ, Բասենի վերոնշյալ 15 բնակավայրերում 1914 թ. հոկտեմբերի վիճակով բնակվել են առնվազն 14000 հայեր, ինչն արդեն 40 %-ով գերազանցում է օսմանյան «մարդահամարի» տվյալները: Այս առումով Բասենի առաջնորդական վիճակագրությունը, որն ինչպես ցույց ենք տվել մեր հոդվածում⁹, իրականում վերաբերում է 1908-1909 թթ., անհամեմատ ավելի բարեխիղճ է կատարված Կարնո առաջնորդարանի կողմից և ավելի ճշգրիտ էր արտացոլում տվյալ ժամանակահատվածի ժողովրդագրական իրավիճակը: Ըստ այդմ, նշված բնակավայրերը 1908-1909 թթ. ունեցել են 11 հզ. բնակիչ: Բնական աճի և ներգաղթի շնորհիվ 1914-ի վերջին այդ թիվը, իրոք, կարող էր հասնել 14 հզ-ի [աճը՝ + 27,3 % կամ տարեկան միջին աճը (տմա)՝ + 4,5 %]:

Հենվելով այս հաշվարկային ցուցանիշի վրա և ելակետային ընդունելով Կարնո առաջնորդարանի վիճակագրական տվյալները (16740 հայ), պետք է եզրակացնել, որ 1914 թ. վերջին Բասենի հայ բնակչության թիվը կազմել է ավելի քան 21 հզ. մարդ: Այս դեպքում այն արդեն 110%-ով գերազանցում է օսմանյան «մարդահամարի» թվերը¹⁰:

2.2. Բասենի հայության հետ գրեթե միաժամանակ Արևելյան Հայաստան գաղթեց նաև Երզրումի վիլայեթի Բայազետի սանջակի 4 կազաների (Բայազետ, Ալաշկերտ, Դիադին, Կարաքիլիսա) գրեթե ողջ հայությունը: Միայն արևմտյան ամենա-

հեռավոր Անթաբի (Դուբաթ) կազայի հայերի մեծագույն մասն է, որ չհասցրեց ժամանակին հեռանալ և մնաց տեղում (այստեղից դուրս էր եկել մի փոքր հատվածը շուրջ 2.6 հզ. բնակչից միայն 350-ը)¹¹:

Օսմանյան «մարդահամարի» համաձայն, նշված սանջակում 1911-1912 թթ. հայերի թիվը կազմել է շուրջ 13,4 հզ.¹²: Սակայն 1914 թ. դեկտեմբերին Արևելյան Հայաստանի տարածքում գրանցված բայազետցի գաղթականների թիվը կազմում էր 23850 անձ (3245 տուն)¹³: Հաշվի առնելով, որ նրանց կորուստները մի քանի անգամ գերազանցում էին բասենցի իրենց եղբայրակիցների տվածը՝ շուրջ 2.3 հզ. (2273)¹⁴, կստանանք, որ գրանցված վերոհիշյալ 3245 տները մինչև գաղթն ունեին ավելի քան 26,1 հզ. բնակիչ: Ինչպես տեսնում ենք, արդեն այս ոչամբողջական վիճակագրության տվյալները երկու անգամ գերազանցում են օսմանյան «մարդահամարի» ցուցանիշները՝ լիովին ժխտելով դրանց հավաստիությունը: Սակայն, կրկնում ենք, 1914 թ. դեկտեմբերյան հաշվառումն ամբողջական չէր: Մեր հաշվարկներով Բայազետի տարբեր կազաներից ընդհանրապես չի կարողացել գաղթել, հետևաբար՝ և որևէ հաշվառման չի ենթարկվել, ավելի քան 4,8 հզ. հայ (զոհվածներ, անհետ կորածներ, տեղում մնացածներ, օսմանյան բանակ զորակոչվածներ ևն): Բավական է նշել, որ միայն Ալաշկերտի Մուլլա-Սուլեյման, Ջեյդեկան (Ջետկան) գյուղերի հայ բնակչության կորուստը, մեր հաշվարկներով կազմել է ավելի քան 1,3 հզ. մարդ¹⁵, իսկ Դիադինի Ջուջան գյուղի 1914 թ. նոյեմբերին գրանցված 514 հայերից (վիճակագրությունն անց է կացվել քաղաքացիական գործերի լիազոր, Պետական դումայի նախկին պատգամավոր Սիրական Տիգրանյանի գլխավորած հանձնախումբը՝ Կովկասյան բանակի հրամանատարության հանձնարարությամբ)¹⁶ 30.01.1915թ. երևանի նահանգում հաշվառվել էր ընդամենը 41-ը (մեծագույն մասը չէր անցել սահմանը - Գ.Բ.)¹⁷: Հաշվի առնելով վերոբերյալը, եզրակացրել ենք, որ 1914 թ. նոյեմբերին Երզրումի վիլայեթի Բայազետի սանջակի հայության թիվը կազմել է շուրջ 31 հզ. մարդ, որն ավելի քան 130 %-ով (!) է գերազանցում օսմանյան 1911-12 թթ. տվյալները: Չմոռանալով նշել, որ նույն ժամանակահատվածին վերաբերող հայկական վիճակագրական աղբյուրները հաղորդում են մեր տվյալներին բավական մոտ ցուցանիշներ: Այսպես, ըստ Կարնո առաջնորդարանի «տունարի» սանջակի հայերի թիվը կազմել է շուրջ 25,2 հզ. (25211, սխալ հաշվարկով՝ 26251)¹⁸, իսկ Մշո առաջնորդարանի քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի վիճակագրությամբ՝ շուրջ 27,4 հզ. մարդ (27393)¹⁹: Այս փաստերը լրացուցիչ անգամ վկայում են հայկական վիճակագրության անհամեմատ ավելի բարձր հավաստիությունը:

3.1. Քննարկվող հարցի տեսանկյունից առավել «բարդ» վիլայեթների թվին է պատկանում Վանը: Դա կապված չէ միայն պաշտոնական և հայկական վիճակագրությունների տվյալների միջև գոյություն ունեցող ահռելի տարբերությամբ՝ առաջինի համաձայն՝ շուրջ 68 հզ. հայ²⁰, իսկ 2-րդ խմբի ցուցանիշներից առավելագույնը՝ 214 հզ. է: Ընդ որում, թուրքերն, իրոք գերազանցել էին իրենք իրենց: Հատկանշական է, որ իր թրջամետությամբ աչքի ընկնող Ջ. Մըք-Քարթին ստիպված էր խոստովանել *nufus-i umumi-i* Վանի վիլայեթի հայերի թվաքանակի խիստ թերհաշվառումը և, յուրատեսակ «կոմպրոմիսային» տարբերակ մշակել՝ վերջինիս, ինչպես նաև՝ Բիթլիսի համար հայ բնակչության թիվն ավելացնելով 1,3 անգամ (130 %-ով), որը, ճիշտն ասած, այնքան էլ հասկանալի չէ, քանի որ հեղինակը չի բացահայտում, թե ինչի՞ հիման վրա է ստացել վերոհիշյալ ցուցանիշը: Բացի այդ, հաճախ հայկական տեղեկագրերն են իրար հակասող և էապես տարբերվող տեղեկություններ հաղորդում: Բավական է նշել, որ ըստ բնակավայրերի 1913-1914 թթ. կատարված «դպրոցական» պայմանական անունը կրող վիճակագրության (այսուհետև՝ ԴՎ, վերջինիս գործուն մասնակցություն են ունեցել հատկապես հայ ու-

սուցիչները) համաձայն, որի քիչ թե շատ ամբողջական տվյալներն առաջինը հրատարակեց Ա-Դոն իր հայտնի «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին» գրքում (Երևան, 1917), Վանի վիլայեթի հայերի թիվը 1914-ին կազմել է շուրջ 121,4 հզ. մարդ: Ավելացնենք, որ այդ տվյալների մանրակրկիտ ուսումնասիրությունն ու քննությունը ցույց տվեցին, որ դրանք վերաբերում են տարբեր տարիների (1912-1914 թթ.), որոնք հաճախ հեղինակի կողմից ընտրվել են կամայականորեն, (1912-1914 թթ.), որոնք հաճախ հեղինակի կողմից ընտրվել են կամայականորեն, (1912-1914 թթ.), որոնք հաճախ հեղինակի կողմից ընտրվել են կամայականորեն, (1912-1914 թթ.), որոնք հաճախ հեղինակի կողմից ընտրվել են կամայականորեն, (1912-1914 թթ.): լույս ընծայած «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատությունից: Վերջինիս նյութերը, ինչպես հայտնի է, Ա-Դոն հավաքել է 1909 թ. Արևմտյան Հայաստանում կատարած եռամսյա շրջագայության ընթացքում: Ձեռքի տակ ունեցած ԴՎ առնչվող այլևայլ նյութերի մեր կողմից համադրումն ու վերահաշվարկը (մասնավորապես՝ միևնույն բնակավայրերի վերաբերյալ առկա մեկից ավելի վիճակագրական տվյալների դեպքում, ընտրել ենք առավելագույն ցուցանիշը – Գ.Բ.), նույնպես մեծ արդյունքներ չտվեցին: Այս դեպքում հայերի թիվը տատանվում է 123-125 հզ-ի միջև: Այն հայտ է, որ ԴՎ անց է կացվել պրոֆեսիոնալ ցածր մակարդակով, ուստի և պարունակում է բազմաթիվ սխալներ և թերութուններ: Ընդ որում, որոշակիորեն պարզ դարձավ, որ գոյություն են ունեցել մեկից ավելի տեղեկագրեր – «տումարներ»՝ շատ դեպքերում զգալիորեն տարբերվող տվյալներով: Սրանով ենք բացատրում այն հանգամանքը, որ Վանի վիլայեթի հայ բնակչության թվաքանակին վերաբերող հայկական վիճակագրական տվյալները տատանվում են 140-214 հզ-ի միջև²¹: Դրանց շարքում առավել տարածվածը և հավաստի համարվել է 1912 թ. Կ. Պոլսի պատրիարքարանի լավ հայտնի վիճակագրությունը, համաձայն որի վիլայեթի հայերի թիվը կազմել է 197 հզ., որից 185 հզ-ը՝ Վանի, իսկ 12 հզ-ը՝ Հաքարիի սանջակներում²²:

Այս «թնջուկը» կրկին հնարավոր է դառնում «քանդել» գաղթականների վիճակագրությունների շնորհիվ: Ինչպես հայտնի է, 1915 թ. մայիսին Վանը և վիլայեթի ողջ տարածքը գրաված ռուսական բանակը, հուլիսին անսպասելիորեն նահանջեց, դրանով իսկ ստիպելով Վասպուրականի փրկված հայությանը լքել իր բնօրրանը: Արևելյան Հայաստանի, մասամբ՝ նաև Պարսկաստանի և Այսրկովկասի տարածքը կրկին հեղեղվեցին հայ գաղթականների զանգվածներով: 1916 թ. հունվարի 14-ին Կովկասի փոխարքայության նոր հրահանգով անցկացվեց գաղթականների 2-րդ միօրյա վիճակագրությունը: Այս դեպքում էլ հաշվառումը կատարվել է ըստ բնակության վայրի: Ըստ այդմ, միայն Վանի վիլայեթից դուրս եկածների թիվը կազմում էր 24127 տուն (ընտանիք)²³: Ճիշտ է, հանդիպում է նաև մեկ այլ ցուցանիշ՝ 18586 տուն²⁴, սակայն ավելի լիարժեքը, ուստի և՛ հավաստի, առաջինն է, ինչը հաստատվում է 1917 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին անցկացված գաղթականների հերթական վիճակագրության տվյալների համեմատությամբ²⁵: Միաժամանակ վիլայեթի 158 բնակավայրերից հեռացած 1561 տների (ընտանիքների) վերաբերյալ հավաքած վիճակագրական նյութերի հիման վրա, մեզ հաջողվել է ճշտել վանեցի հայերի տան մեծության միջին գործակիցը (տմնոգ)՝ 8,8²⁶: Որոշ վերապահումով ընդունելով, որ վերոհիշյալ 24127-ը Վանի վիլայեթի հայ տների (ընտանիքների) վերջնական թիվն է (լուրջ հիմքեր ունենք պնդելու, որ շատ հայ ընտանիքներ ամբողջությամբ ոչնչացվել են – Գ.Բ.), կստանանք, որ 1914 թ. այստեղ ապրում էր 210-212 հզ. հայ: Սա ավելի քան 3 անգամ գերազանցում է օսմանյան «մարդահամարի» և 1,7 անգամ ԴՎ տվյալները:

3.2. Ի դեպ, ԴՎ տեղեկությունները լրջորեն սրբագրվում են առանձին կազանների հանգամանակից քննության պարագայում ևս: Ինչպես տեղում ջարդերին հաջորդած ամիսների ընթացքում, այնպես էլ Վանի Մեծ գաղթից հետո արված վիճակագրությունների մեզ հասու նյութերը հնարավորություն են ընձեռում ճշտել վիլայե-

թի մի ամբողջ շարք վարչամիավորների հայ բնակչության թվաքանակը (Արճեշ, Աղբակ, Մուկս, Շատախ, Թիմար, Մահմուդի ևն): Որպես օրինակ, ստորև ներկայացնում ենք Արճեշի կազային վերաբերող մեր հաշվարկները (գտնվում էր Վանա լճի հյուսիսային ափերին՝ տարածվելով մինչև Ծաղկանց-Ալադաղի լեռնաշղթան – Գ.Բ.): 1915 թ. հուլիսի սկզբին Վանի շրջանային վարչության կողմից գործողված Հ. Տեր-Հակոբյանը տեղում կազմակերպել է վերապրած հայերի հաշվառում: Նշենք, որ տվյալները բնավ էլ վերջնական չեն կարող համարվել, քանի որ բազմաթիվ հայ ընտանիքներ 1915 թ. ապրիլյան ջարդերի ընթացքում ցրվել էին այլևայլ վայրեր և հուլիսին տեղում չեն եղել: Նրանց մի մասը հաստատվել էր հարևան Էրզրումի վիլայեթի Բաղնոցի (Պատնոց) շրջանում, և գրեթե նույն ժամանակահատվածում այդ բեկորների վիճակագրությունն է կազմել նաև Ն. Մարտիրոսյանը²⁷: Բացի այդ որոշակի թվով արճեշցի հայերի հաջողվել էր անցնել ռուսների կողմից վերահսկվող Դիադին²⁸: Սրանով հանդերձ, Հ. Տեր-Հակոբյանի հաշվառման և ԴՎ տվյալների համեմատության արդյունքում ստացվում է անճշտության (դիսպերսիա) բավական մեծ ցուցանիշ: Մեր կողմից առանձնացված 13 գյուղերում (Աղսրավ, Արջոնից վանք, Բանոն, Գանձակ, Գելկան-Գյալահոկ, Իրիշատներ Վերին և Ներքին, Մատղավանք, Մեծոփ, Մոյ, Չախրբեկ-Չիլան, Ջուղգահ, Փայխըներ), 1915 թ. հուլիսի 8-ի հաշվառման համաձայն, մինչև կոտորածը եղել է 3,5 հզ. բնակիչ, մինչդեռ ըստ ԴՎ՝ 2,4 հզ. (տվյալները կլորացված են): Անճշտությունը կազմում է շուրջ 1,1 հզ. անձ կամ 45,8 %: Եթե նկատի առնենք, որ ըստ ԴՎ Արճեշի հայերի թիվը կազմել է ավելի քան 10,3 հզ. մարդ²⁹, ապա անճշտության վերոհիշյալ ցուցանիշը հաշվի առնելով, կստանանք, որ իրականում նշված կազայում Առաջին աշխարհամարտի նախօրյակին ապրել են առնվազն 15 հզ. հայեր (չի բացառվում, որ վերջինս ավելին լիներ – Գ.Բ.): Ավելացնենք, որ օսմանյան «մարդահամարով» Արճեշի հայերի թիվը մի փոքր ավելի էր 8 հզ-ից³⁰: Ինչպես ասում են, մեկնաբանություններն այստեղ ավելորդ են...

Գրականություն

1. Ottoman Populaton. 1830-1914. Demographic and Social Characteristics, The University of Wisconsin Press, 1985:
2. Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire, New-York-London, 1983:
3. Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, ԺՁ տարի, Կ.Պոլիս, 1922: Նույնի Գողգոթա հայ հոգեւորականութան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, խմբ. Արայ Գալայճեան, Նիւ Եօրթ, 1985: Kevorkian R.H., Paboudjian P.B., Les Armeniens dans l'empire Ottoman a la veill du Genocide, Paris, 1992:
4. "Эриванская статистическая комиссия. Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.)1914-1915 гг.)", Эривань, 1915 (այսուհետև՝ ЭСК): ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 28, ցուցակ 1, գ. N 132, թթ. 30-35: ՀՀ պատմության պետական քանդաքան, Նոր պատմության ֆոնդ, Ա-Դոյի արխիվ, գ. N 839/176, թթ. 1-5:
5. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց.1, գ. 430, թթ. 21-59:
6. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 111:
7. ЭСК, стр. 44/45:
8. Հաշվարկել ենք ըստ Շարաֆյան Աղ., Թիւրքահայ փախստականները և նրանց վիճակը, «Հորիզոն», N 273, էջ 2: «Բասէն գաւառի 11 հայ գիւղերի ազգաբնակչութիւնը», «Հորիզոն», N 276, էջ 3: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց.1, գ. 128, թ. 74: Հմմտ. Բաղայան Գ., Էրզրումի վիլայեթի որոշ կազանների հայ բնակչության թվաքանակի ճշտումն ըստ

Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների 1914-1915 թթ. կազմված վիճակագրական ցուցակների, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», գիտական աշխատություններ, N 4, Եր., 2001, էջ 114:

9. Տե՛ս **Բաղայան Գ.**, ն.տ., էջ 115:

10.Ն.տ., էջ 115-116:

11.Ն.տ., էջ 117-118:

12.Karpat, pp. 170/171.

13.Տե՛ս «Տեղեկագիր Հայկական կենտրոնական կոմիտեի գաղթական-փախստականների մասին», «Հորիզոն», Թ., 1915, N 61, «Յաւելած», էջ 2:

14.Ն. տ.

15.**Բաղայան**, էջ 117-118:

16.«Համբաւաբեր», Թ., 1916, N 27, էջ 840-841:

17.Հմմտ. ՅՇԿ, ԵՄՔ. 48:

18.Les Armeniens, pp. 59, 458-460:

19.«Վան-Տոսպ», թ. 1917, N6, էջ 4-5: Հմմտ. Պապաճանեան Ա., Ինչո՞ւ և ինչպէ՞ս գաղթեցինք, «Արարատ», N Բ-Գ, Ս. էջմիածին, 1915, էջ 168-169:

20.Karpat, p., 182 (183):

21.Տե՛ս *Marcel Le art*, La Question Armenienne a la lumiere des documents, Paris 1913, pp. 60-61: Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր Եօհաննես Լեփսիուսի Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 84: Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը ԺՁ տարի, էջ 262: Նույնի, Գողգոթա, էջ 33: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 397 (Գևորգ Մեսրոպի ֆոնդ), ց. 1, գ.1, թ. 44: Գ. 105, թթ. 2-3:

22.**Թեոդիկ**, ն.տ.:

23.ՀՀ ՊԹ, նոր պատմության ֆ., Ա. Դոյի արխիվ, գ. N 839/176, թ. 4:

24.ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց.1, գ. 132, թ. 32:

25.Ն.տ., 28, ց.1, գ. 1131, թթ. 1-11:

26.Հաշվարկը ըստ ՅՇԿ, ԵՄՔ. 50/51: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 111, ֆ. 227, ց. 1, գ. 430:

27.Տե՛ս «Վան-Տոսպ», թ., 1916, N 16, էջ 7. «Արճէշի և Ալճաւազի գիւղերու վիճակագրութիւնը կազմած են ռուս բանակի այդ կողմերը գրաւած առաջին օրերուն (1915 թ. մայիս-հունիս - Գ.Բ.) շրջելով գիւղերը և հարցաքննելով այն կիները, որք ազատուած էին կրակէն, եկած ապաստանած էին Բաղնոցի շրջանակը: Մի քանի գիւղերը ընտանիք առ ընտանիք ցուցակագրած են.»։ Ծանոթությունը՝ Ն.Մարտիրոսյանի:

28.Տե՛ս «Արճէշի կոտորածի կապակցութեամբ», «Մշակ», թ., 1915, N 76, էջ 1: Հմմտ. Մեծ դէպքերը, էջ 173, 177:

29.Ըստ «Մեծ դէպքերը...» գրքի, էջ 16:

30.Karpat, pp. 182-183: